*Պ-595$^{2}$-01.09.2010- ՊԻ-010/2*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

***Հոդված 1.*** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը «պատասխանատվություն» բառից հետո լրացնել «եւ լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում» բառերով:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հեղինակներ**` Արա Նռանյան, Վարդան Բոստանջյան, Ռուզաննա Առաքելյան, Գոհար Ենոքյան, Սամվել Նիկոյան